ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սևան համայնքի ավագանու քառամյա /2012-2016թթ./ գործունեության

2012թ. սեպտեմբերի 23-ին Սևան համայնքում տեղի ունեցան ՏԻՄ ընտրություններ: Համայնքի ղեկավար ընտրված Ռուդիկ Ղուկասյանը և ավագանու 15 անդամ իրենց պարտականություններն ստանձնեցին նոյեմբերի 5-ին:

Համայնքի ավագանու 1-ին նիստը տեղի ունեցավ նոյեմբերի 19-ին:

Համայնքի ավագանին քառամյա գործունեության ընթացքում հրավիրել է 22 նիստ, լսվել է 131 հարց, ընդունվել է 131 որոշում, միաձայն դեմ է քվեարկվել 1 հարցի:

2012թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին տեղի է ունեցել 2 նիստ, ընդունվել է 23 որոշում:

2013թ. տեղի է ունեցել 7 նիստ, նիստերի ընթացքում և հարցման կարգով ընդունվել է 59 որոշում, 2014թ-ին՝ 4 նիստ, ընդունվել է 42 որոշում, 2015թ.՝ 4 նիստ, ընդունվել է 59 որոշում, 2016թ-ին՝ 4 նիստ, ընդունվել է 53 որոշում:

Համայնքի ավագանու 15 անդամներից այժմ շարունակում են իրենց գործունեությունը 13-ը:

Ավագանու անդամ Հունան Բաղդասարյանի լիազորությունները դադարեցվել են 2015թ. փետրվարի 1-ին՝ համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի
21-րդ հոդվածի 9-րդ կետի:

Ավագանու անդամ Պարգև Սահակյանի լիազորությունները դադարեցվել են 2015թ. հուլիսի 17-ին՝ համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 6-րդ կետի:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին կետի պահանջն է՝ համայնքի ավագանին պարտավոր է մասնակցել ավագանու նիստերին: Իրենց պարտականությունների շրջանակներում համայնքի ավագանու անդամների ներկայության այսպիսի պատկեր է գրանցվել 4-ամյա գործունեության ընթացքում.

- ✓ հրավիրված 22 նիստից ավագանու անդամ Գուրգեն Անտոնյանը մասնակցել է 15 նիստի, ունի 7 բացակա /2-ը՝ 2012թ. 3-ը՝ 2014թ., 2-ը՝ 2015թ./:
- ✓ Կամո Ավագյանն ունի 1 բացակա / 2012թ. /:
- ✓ Արամ Ավետիսյանը՝ 4 բացակա / 2-ը՝ հարգելի /:
- ✓ Բագրատ Ավետիսյանը՝ 1 բացակա / 2013թ. /:
- ✓ Արայիկ Գևորգյանը՝ 7 բացակա / 5-ը՝ 2013թ., 2-ը՝ 2014թ. /:
- ✓ Արամ Էլիզբարյանը՝ 6 բացակա / 2-ը՝ 2013թ., 1-ը՝ 2014թ., 2-ը՝ 2015թ., 1-ը՝ 2016թ. /
- ✓ Արման Հայրապետյանը՝ 5 բացակա / 2-ը՝ 2014թ., 2-ը՝ 2015թ., 1-ը՝ 2016թ. /
- ✓ Սերգեյ Ներսիսյանը՝ 8 բացակա / 1-ը՝ 2012թ., 2-ը՝ 2013թ., 2-ը՝ 2014թ., 2-ը՝ 2015թ. /
- ✓ Արմեն Սաղաթելյանը՝ 7 բացակա / 2-ը՝ 2013թ., 2-ը՝ 2014թ., 2-ը՝ 2015թ. 1-ը՝ 2016թ. /
- ✓ Վահե Սաղաթելյանը՝ 3 բացակա / 2-ը՝ 2013թ., 1-ը՝ 2015թ. /
- ✓ Արսեն Սարգսյանը՝ 7 բացակա / 2-ը՝ 2013թ., 3-ը՝ 2014թ., 1-ը՝ 2015թ., 1-ը՝ 2016թ. /
- ✓ Նելսոն Սարգսյան՝ 2 բացակա / 2013թ. /
- ✓ Տիգրան Սարգսյան՝ 11 բացակա / 2-ը՝ 2013թ., 3-ը՝ 2014թ., 3-ը՝ 2015թ., 3-ը՝ 2016թ. /